ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ Հայաստանի Հանրապեպետություն Լոռու մարզ
Խնկոյան համայնք, փողոց 1 թիվ 19

☎ 093476682

«07» նոյեմբերի 2018թ.

N 169

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ պարոն
Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ եմ ներկայացնում Խնկոյան համայնքի ղեկավարի «Խնկոյան համայնքի տարածքում ՀՀ Ազգային ժողովի 2018թ. արտահերթ ընտրությունների տեղամասային կենտրոն սահմանելու մասին» 07.11.2018թ. թիվ 14-Ա և 07.11.2018թ. թիվ 15-Ա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար Վ. Համբարձումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» նոյեմբերի 2018 թվականի N 14- Ա

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ մասին և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի արտահերթ ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Խնկոյան համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել <<Խնկոյանի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ գ. Խնկոյան, 1 փողոց, շենք 21):

2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2018թ. նոյեմբերի 07

գ. Խնկոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» նոյեմբերի 2018 թվականի N 15- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Կոծինյան Արայիկ Սամվելի բնակելի տուն՝ հասցեն գ. Խնկոյան, 1 փողոց, տուն 34 /սեփականատիրոջ համաձայնությամբ/,

2) Խանութի շենք՝ հասցեն գ. Խնկոյան, 1 փողոց, շենք 54 /սեփականատիրոջ համաձայնությամբ/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 07

գ. Խնկոյան